

ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՊԱՐԳԵՎ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԽԱԶՎԵՐԱՑԻ ՏՈՆԻՆ (15 սեպտեմբերի 2002 թ.)

«Ցանուն Նոր և Որդայ և Նոգայն Սրբոյ. ամեն»:

Այսօր Նայոց Եկեղեցին փոխում է փարվա վերջին փաղափար փոնը, որ կոչվում է Խաչի փոն կամ Խաչվերացի փոն: Մենք չորս փոներ ունենք նվիրված խաչին՝ Խաչի Երևում, Գյուլի Խաչի, Խաչվերաց և Վարազա Խաչ:

Մենք, որպես քրիստոնյաներ, հաճախ ասում ենք՝ ո՛վ Տեր, Քո սուրբ խաչը «եղիցի մեզ վահան ամրութեան և զէն յաղթութեան»: Թող այդ խաչը լինի հաղթանակի զենք և մեզ համար լինի զենք ապահովության: Ինչո՞ւ, մի գործիք, մի խաչ, որի վրա պարծում էին հանցագործներին, մեղավորներին, ինչո՞ւ հեթանոս աշխարհը և բուն հռոմեացիք կիրառում էին խաչը որպես մահապարիժ, որպես պարժիչ գործիք ընդդեմ հանցագործների, այնուհետև պիտի պաշտեին, պիտի նրանից գորություն խնդրեին, նրանով պիտի պաշտպանվեին:

Ինչո՞ւ ենք մենք քրիստոնյաներս դիմում Տիրոջը այդ խնդրանքով և խաչի նշանն էլ մեր կրծքի վրա ենք կրում որպես մի նշան՝ ցույց փալու համար, որ մենք քրիստոնյաներ ենք: Նում թեև այդ գործիքը մեղավորներին պարժելու և հալածելու համար էր, սակայն երբ Քրիստոսին խաչ բարձրացրին, մեխերով գամեցին աչ և ձախ ձեռքերը, մենք գիտենք, որ այդ պահին Քրիստոս կամավոր կերպով բարձրանալով խաչ, Իր աչ ձեռքում գամեց մարդկային մեղքը, որը դարձավ պարճառ մահվան, և ձախ ձեռքով խաչի վրա գամեց մահը, Իր աստվածային այդ գորությամբ սրբագործեց, մի նոր գորություն փվեց խաչի նշանին, որը առաջ մարմնական պարժի էր ենթարկում հանցագործներին: Ոստի Քրիստոսի խաչելությունից հետո այդ խաչափայտի վրա երբ որ գամվում են մեղքը, մահը, այն սրանում է այլևս հոգևոր մի նոր իմաստ և բովանդակություն և մի նոր գորություն, որով մարդու համար ճանապարհ է հարթվում դեպի հավիտենականություն:

Չկա հարություն՝ առանց խաչվելու, չկա հավիտենական կյանք՝ առանց փառապանքի, առանց փուրքը փալու ընդդեմ գործած մեղքերի: Մեր փուրքը խաչափայտի վրա փվեց մեր Փրկիչ Նիսուս Քրիստոս, դրանով վճարեց և հարթեց մեր փրկության ճանապարհը, և ահա այս պարճամիջոցը Քրիստոսի խաչելությունից հետո դառնում է կրկնակի պարճամիջոց, սակայն արդեն ընդդեմ մեղքերի և ընդդեմ մահվան: Սրանով է, որ մենք հալածում ենք դևերին, կախարդներին: Սրանով է, որ մենք պաշտպանում ենք մեզ ընդդեմ չարերի, խաչակնքում ենք և ասում. «Մեղքերից հեռու պահիր, Տեր Աստված»:

Ահա այս պարճառով մենք խաչի մեջ փեսնում ենք ոչ միայն գործիք, այլև բուն Նիսուս Քրիստոսի: Այսինքն՝ Նիսուսի խորհրդանիշը խաչն է դառնում: Սրանով է, որ մենք

պաշտպանվում ենք, սրանով է, որ պիպի առաջ գնանք, սրանով են մեր հայրերը պայքարել, հաղթանակներ փարել: Տիշենք Շուշիի ազատագրումը, որ սկսվեց Խաչի Երևման փոնի օրը, բուն օրը մայիսի 7-ին, երբ բոլորի վրա խաչի նշանը կար: Նենք այդ խաչով էլ մերոնք հաղթություն ստացան Աստուծոց: Եվ ահա թե ինչու մենք պարտավոր ենք հպարտությամբ, ուրախությամբ կրել աստվածային այդ զինանշանը՝ Քրիստոսի խորհրդանիշը մեզ վրա:

Այսօր մենք նշում ենք մի յուրահատուկ փոն, որը մեզ հիշեցնում է յոթերորդ դարի հեյրևյալ դրվագը, երբ պարսից Խոսրով թագավորը, գրավելով Երուսաղեմը, գերեվարում է այն խաչափայտը, որի վրա խաչվել էր Տիտու Քրիստոս, որով խաչը քրիստոնյաներիս համար դարձել էր մի մեծ սրբություն, մի մեծ գոռություն:

615 թ. Ներակի կայսրը կարողանում է մեծ բանակ կազմել, որին միանում են նաև հայկական զնդերը, և արշավում է դեպի Պարսկաստան՝ ապավինելով Աստուծուն, և հաղթանակ փանում: Նաշտության պայմաններում կար ևս մեկ կեպ, որով պարսիկները պարտավորվում էին վերադարձնել Քրիստոսի խաչափայտը, և այն մեծ հանդիսություններով, շարականներով, մոմերով և խնկարկությամբ ու աղոթքներով բերվում է Պոլիս: Բոլորը երկրպագում էին Սուրբ Խաչին՝ ականաբես և վկա լինելով զանազան հրաշքների: Խաչափայտից փոքրիկ մասունքներ են բաշխվում ողջ քրիստոնյա աշխարհին: Մենք, որպես հայ քրիստոնյաներ, ստանում ենք մեր բաժինը, որն այսօր Սուրբ Խոսրոսի վրա է դրված, և որը թող մեզ և ձեզ լինի հավերժ պահապան և ճառագայթալ լույս հավիտենական, փրկական ճանապարհին:

Եթե հիշենք, թե ինչպես իշխանության եկավ Մեծն Կոստանդին կայսրը, ապա կհիշենք այն դրվագը, երբ նա փեսիլքի մեջ փեսնում է խաչի նշանը, և Աստված նրան ասում է. «Սրանով ես հաղթելու թշնամիներին»: Ջարհուրած այդ փեսիլքից, իր դրոշների վրա ամեն փեղ դնում է խաչի նշանը և փոքրաթիվ բանակով սքանչելի հաղթանակ փանում: Ներագայում դառնում է քրիստոնյա և փարածում քրիստոնեությունը կայսրության ողջ փարածքում, որից առաջ, դեռևս 301 թ., մեր հայոց Տրդատ թագավորը Լուսավորչի աղոթքներով, փառապանքներով առաջինն ընդունեց այս նշանը և քրիստոնեական հավաքը ամուր պահեց մեր մեջ:

Ինչպե՛ս կիրառենք այս սքանչելի զենքը հոգևոր իմաստով մենք մեր մեջ. ինքներս պիպի խաչվենք, մենք մեր մեջ պիպի խաչենք մեր կրքերը և մեղքերը, մենք պիպի հալածենք մահվան պարճառը մեր մեջ, որպեսզի արժանի լինենք դառնալու հավիտենական կյանքի ժառանգորդը, որպեսզի կարողանանք ճշմարտապես արժանի լինել քրիստոնյայի անունը կրելու, վաստակելու: Ուստի թող Տերը մեզ գոռություն փա, ներսից մենք մեզ անարյուն կերպով խաչենք և մեղքը զամենք մեր ներքին խաչի վրա, մենք մեր Գողգոթայով անցնենք, քանզի Քրիստոս մեզ համար թափեց իր արյունը խաչի վրա, որպեսզի մենք անարյուն պատարագով, անարյուն ճգնությամբ, անարյուն նահապակությամբ կարողանանք ընթանալ ճշմարիտ և անսասան ճանապարհով: Թող Սուրբ Խաչի գոռությունը և գորավոր շնորհը հավիտյան լինեն ձեզ հեպ, մեզ հեպ և ամեն մի հայի հեպ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն: